ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2024թ. № 1006

ՎԱՐԴԱՆ ՀՈՎԱԿԻՄԻ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 48[1]-րդ և 76-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման» կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 129-Ա որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03102024-06-0030 վկայականը և Վարդան Հովակիմի Սարդարյանի (ծնված՝ 18.09.1986թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս.Շահումյան փողոց 28/3 հողամաս» հասցեում գտնվող 06-006-0491-0043 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,002 հեկտար մակերեսով հողամասը, ավտոտնակ կառուցելու համար, 25 տարի ժամկետով, առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով տրամադրել Վարդան Հովակիմի Սարդարյանին: Հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարը սահմանել 6000 ՀՀ դրամ:

2. Վարդան Հովակիմի Սարդարյանից հետ գանձել միավորի նկատմամբ մինչև օգտագործման տրամադրումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

3. Վարդան Հովակիմի Սարդարյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

4. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե.Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2024թ. № 1007

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈԳԱՐԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԵՆՏՐՈՒՇ ՆԱՐԻԲԵԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, 0,01019 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 64-րդ կետով, հաշվի առնելով, որ Լենտրուշ Նարիբեկի Սահակյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող, 06-030-0024-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասից առանձնացված հողամասի չափը կազմում է 0,11019 հեկտար, որից 0,1 հեկտարը Լենտրուշ Նարիբեկի Սահակյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 0,01019 հեկտարը՝ ուղղակի վաճառքի միջոցով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1990 թվականին կառուցված բնակելի տունը և անասնաշենքը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով Լոռի-4 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ՌԻԳ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի

հաստատումը (քաղվածք՝ 06052EGKWBJ) և Լենտրուշ Նարիբեկի Սահակյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող 06-030-0024-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,11019 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Լենտրուշ Նարիբեկի Սահակյանի (ծնված՝ 25.05.1962թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող, 06-030-0024-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,1 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 86,80 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան և 36,70 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքի նկատմամբ:

3. Լենտրուշ Նարիբեկի Սահակյանի կողմից տիրապետվող 0,1 հեկտար հողամասից ավել օգտագործվող 0,01019 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ ընդամենը 9415,56 ՀՀ դրամ (1 քմ 92,4 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքի միջոցով օտարել Լենտրուշ Նարիբեկի Սահակյանին:

4. Լենտրուշ Նարիբեկի Սահակյանի կողմից տիրապետվող 0,11019 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 86,80 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 36,70 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Գոգարան, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 3 բնակելի տուն» հասցեն:

5. Հաստատել Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող, 06-030-0024-0005 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,11019 հեկտար հողամասի հատակագիծը:

6. Լենտրուշ Նարիբեկի Սահակյանին հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2024 թ. № 1008

06-006-0020-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,045 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2097903 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011YTVKT95) և Մելիք Հովիկի Հովհաննիսյանի (ծնված 24.12.1970թ.) ներկայացուցիչ Մարտուն Նշանի Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 06-006-0020-0004 կադաստրային ծածկագրով 0,045 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող՝ 80,4 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակին տրամադրել «Սպիտակ համայնք, ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց, 1-ին նրբանցք, 8 ավտոտնակ» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2024թ. № 1009

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱՀԻՏ ՄՅԱՍՆԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, 0,1330 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Գեղասար բնակավայրում գտնվող, 06-028-0027-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,2330 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և դրա վրա գտնվող բնակելի տունն ու բնակելի նշանակության օժանդակ շինությունները տիրապետել են Մյասնիկ և Գյուլվարդ Կարապետյանները, ում մահից հետո մինչ օրս վերը նշված անշարժ գույքը շարունակում է տիրապետել Անահիտ Մյասնիկի Սահակյանը, Մյասնիկ Նազար Կարապետյանի և Գյուլվարդ Վաղարշակ Կարապետյանի ժառանգ է հանդիսանում Անահիտ Մյասնիկի Սահակյանը, ում կարող է անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել 0,2330 հեկտար մակերեսով հողամասի 0,1 հեկտարը, իսկ 0,1330 հեկտարը՝ ուղղակի վաճառքով, 06-028-0027-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,2330 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը

ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1991 թվականին կառուցված բնակելի տունը, բաց պատշգամբը, անասնաշենքը, ավտոտնակը և ծածկը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «Վանաձորի Նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, «Սարգիս Թամազյան» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեում հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06042KHWL2E5) և Անահիտ Մյասնիկի Սահակյանի ներկայացուցիչ Գայանե Ռազմիկի Պետրոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել՝ Անահիտ Մյասնիկի Սահակյանի (ծնված 24.01.1971թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Գեղասար բնակավայրում գտնվող, 06-028-0027-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,1 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական

նշանակության հողամասի և դրա վրա կառուցված 128,60 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան, 19,60 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբի, 30,40 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքի, 32,40 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի և 13,50 քառակուսի մետր մակերեսով ծածկի նկատմամբ:

2. Անահիտ Սահակյանի կողմից տիրապետվող 0,1 հեկտար մակերեսով հողամասից ավել օգտագործվող 0,1330 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ ընդամենը 289 674 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 217,8 ՀՀ դրամ), ուղղակի վաճառքով օտարել Անահիտ Մյասնիկի Սահակյանին:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հատակագիծը:

4. Անահիտ Մյասնիկի Սահակյանի կողմից տիրապետվող 06-028-0027-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,2330 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և դրա վրա կառուցված 128,60 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 19,60 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբին, 30,40 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքին, 32,40 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակին և 13,50 քառակուսի մետր մակերեսով

ծածկին տրամադրել «Սպիտակ համայնք, Գեղասար բնակավայր, 3-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 7 բնակելի տուն» հասցեն:

5. Անահիտ Մյասնիկի Սահակյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

6. Սույն որոշմամբ ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե.Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2024թ. № 1010

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԹԻՎ 123 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2003 թվականի հուլիսի 15-ի թիվ 123 որոշման մեջ Լևիկ Անդրանիկի Դարչինյանի (ծնված 20.12.1943թ.) անունը սխալմամբ գրվել է «Լյովա», Սուսաննա Գևորկի Դանիելյանի (ծնված 03.09.1948թ.) հայրանունը սխալմամբ գրվել է «Գևորգի», Նվեր Լևիկի Դարչինյանի (ծնված 17.08.1970թ.) հայրանունը սխալմամբ գրվել է «Լյովայի», իսկ ծննդյան տարեթիվը սխալմամբ գրվել է «1968», Նելի Լևիկի Դարչինյանի (ծնված 16.10.1973թ.) անունը սխալմամբ գրվել է «Նելլի», իսկ հայրանունը սխալմամբ գրվել է «Լյովայի», հիմք ընդունելով Սուսաննա Դանիելյանի ներկայացուցիչ Լյովա Նվերի Դարչինյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սպիտակի քաղաքապետի 2003 թվականի հուլիսի 15-ի «Ընդհանուր սեփականության մասին» թիվ 123 որոշման մեջ գրված «Դարչինյան Լյովա Անդրանիկի» բառերը փոխարինել «Դարչինյան Լևիկ Անդրանիկի» բառերով, «Դանիելյան Սուսաննա Գևորգի» բառերը փոխարինել «Դանիելյան Սուսաննա Գևորկի» բառերով, «Դարչինյան Նվեր Լյովայի» բառերը փոխարինել «Դարչինյան Նվեր Լևիկի» բառերով, «1968» թիվը փոխարինել «1970» թվով, «Դարչինյան Նելլի Լյովայի» բառերը փոխարինել «Դարչինյան Նելի Լևիկի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2024թ. № 1011

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱԲԵՐԻ «ԾԻԱԾԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի 10-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ՆՎԵՐՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, 2024 թվականի հոկտեմբերի 21-ին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱԲԵՐԻ «ԾԻԱԾԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի 10-ամյակին նվիրված միջոցառմանը նվերներ ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու մասին ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի՝ «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 17 100 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2024թ. № 1012

ԱՐՄԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԱՇՐԱՖՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արման Սամվելի Աշրաֆյանը դիմել է Սպիտակ համայնքի ղեկավարին՝ խնդրելով ՈՒզբեկական K3 թաղամասի 20ա բնակելի տան նկատմամբ ճանաչել իր սեփականության իրավունքը:

Արման Սամվելի Աշրաֆյանը դիմումին կից ներկայացրել է իր անձնագրի պատճենը, հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի պատեճենը, ամրացման քարտի պատճենը՝ համաձայն որի K-3 թաղամասի N 20 (1) բնակարանը ամրացվում է Սամվել Սուրենի Աշրաֆյանի ընտանիքին, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2008 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 076/2573-01 գրության պատճենը, որով Սամվել Աշրաֆյանին տեղեկացվել է, որ բնակարանի օրդեր ստանալու համար կարող է ներկայանալ Սպիտակի քաղաքապետարանի բնակարանային տնտեսության բաժին, 2023 թվականի սեպտեմբերի 19-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի պատճենը, համաձայն որի Արման Սամվելի Աշրաֆյանը հանդիսանում է Սամվել Սուրենի Աշրաֆյանի ժառանգը, 06-006-0177-0001 կադաստրային ծածկագրով հողամասից սխեմա հատակագծի պատճենը, Կադաստրի կոմիտեի կողմից տրված տեղեկանք այն մասին, որ շտրիխված հատվածի նկատմամբ պետական գրանցում չի հայտնաբերվել, «Սպիտակշին» ՆՇՄ ձեռնարկության արհկոմի նախագահի 1994 թվականի օգոստոսի 15-ի որոշման պատճենը, որի «բ» կետով Կ-3 թաղամասի թիվ 20ա բնակարանը ամրացվել է թիվ 4 տեղամասի բանվոր Սամվել Սուրենի Աշրաֆյանի ընտանիքին, 1994 թվականի օգոստոսի 3-ի թիվ 8 արձանագրության պատճենը, որի «բ» կետով Կ-3 թաղամասի թիվ 20ա բնակարանը ամրացվել է թիվ 4 տեղամասի բանվոր Սամվել Սուրենի Աշրաֆյանի ընտանիքին:

Արման Սամվելի Աշրաֆյանի դիմումում և Սպիտակի համայնքապետարանում առկա Սամվել Սուրենի Աշրաֆյանի ընտանիքի բնակարանային հաշվառման փաստաթղթերում կան հակասություններ:

Մասնավորապես՝ Սամվել Սուրենի Աշրաֆյանը 1997 թվականի հունվարի 23-ի դիմումով հայտնել է, որ երկրաշարժի ժամանակ իր բնակարանը քանդվել է, չունի անձնական սեփականություն և խնդրել է ընտանիքը հաշվառել բնակարանային բարելավման համար:

Սպիտակ քաղաքի գլխավոր ճարտարապետի 1997 թվականի փետրվարի 4-ի տեղեկանքում նշված է, որ Սամվել Սուրենի Աշրաֆյանին նոր տնատեղ չի հատկացվել:

2012 թվականի նոյեմբերի 13-ի բնակարանային պայմանների ստուգման ակտի համաձայն Սամվել Սուրենի Աշրաֆյանի ընտանիքը, այդ թվում՝ Արման Սամվելի Աշրաֆյանը համարվում է անօթևան և բնակարանի կարիքավոր:

Արման Սամվելի Աշրաֆյանը Սամվել Սուրենի Աշրաֆյանի ընտանիքի կազմում որպես աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիք ստացել է բնակարանային փոխհատուցում:

«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված և սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (ներառյալ՝ հանրության գերակա շահ ճանաչված տարածքներում) այն անհատական բնակելի տները և դրանց կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը, եթե դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ապա սույն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 54-րդ և 55-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Արման Սամվելի Աշրաֆյանի դիմումը մերժել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետություն,Լոռումարզ,Սպիտակիհամայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» հոկտեմբերի 2024թ. № 1013

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-087-0010-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,202353 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2024 թվականի սեպտեմբերի 16-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված է գրանցամատյանում N 6981), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06162FQ4KFDL) Վահան Լյովայի Կյուրեղյանի (ծնված՝ 21.03.1979 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի, Շիրակամուտ բնակավայրում գտնվող 06-087-0010-0003 կադաստրային ծածկագրով 0,202353 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Շիրակամուտ, 11-րդ փողոց, 31 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1820):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ.հոկտեմբերի 22

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» հոկտեմբերի 2024թ. № 1014

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի ԹԻՎ 322 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

1. Փոփոխություններ կատարել Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 4-ի «Բնակարանային հարցերի հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 322 որոշման մեջ՝

1) «Արտակ Մաթոսյան - Սպիտակ համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ» բառերը փոխարինել «Արտակ Մաթոսյան – Սպիտակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ» բառերով,

2) «Արմինե Արշակյան - աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար» բառերը փոխարինել «Արմինե Արշակյան - աշխատակազմի առաջատար մասնագետ» բառերով,

3) «Նորայր Յարմալոյան - աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար» բառերը փոխարինել «Նորայր Յարմալոյան - աշխատակազմի գլխավոր մասնագետ» բառերով,

4) «Տիգրան Սաֆարյան - աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար» բառերը փոխարինել «Դավիթ Թումանյան - աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար» բառերով,

5) «Քնարիկ Պետրոսյան - Սպիտակ համայնքի ղեկավարի օգնական» բառերը փոխարինել «Քնարիկ Պետրոսյան - աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 22
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» հոկտեմբերի 2024թ. № 1015

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 15 արձանագրությունը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի «Այլ սոցիալական ծրագրեր» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 330 000 (երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 22
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հոկտեմբերի 2024թ. № 1016

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով տնտեսվար Արթուր Միքայելյանի 2024 թվականի հոկտեմբերի 21-ի զեկուցագիրը, Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի հոկտեմբերի 11-ի զեկուցագիրը, Սպիտակ քաղաքի փողոցային լուսավորության համակարգի վերանորոգման համար անհրաժեշտ ապրանքներ, հոսանքի երկարացման լար գնելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի «Փողոցների լուսավորություն» գործառական դասակարգման «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածից հատկացնել 97 000 ՀՀ դրամ:

2. Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 5 000 ՀՀ դրամ:

3. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 23
ք.Սպիտակ